ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 373 – Ա **20 դեկտեմբերի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 5 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ>>-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2017 թվականի դեկտմբերի 20-ի N 5 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. դեկտեմբերի 20-ի
N 373 որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի

20 դեկտեմբերի 2017թ. **ք. Գավառ**

2017 թվականի դեկտեմբերի 20-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Հակոբյան
Քարտուղար՝ Գ. Խաչատրյան
Անդամներ՝ Կ. Բաղդասարյան
Գ. Գրիգորյան
Լ. Գևորգյան

Օրակարգում

Մարտունի(Ա/Կ) - Մադինա - Մարտունի թիվ 27 ներմարզային ավտոբուսային երթուղու պահուստային ավտոբուսը փոխարինելու մասին:

Քննարկվեց

<<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենի գրության համաձայն առաջարկվում է Մարտունի(Ա/Կ) - Մադինա - Մարտունի թիվ 27 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 374ՍՏ16 պետհամարանիշի /22-26Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1987 թվականի արտադրության ավտոբուսը տեխնիկապես անսարք լինելու պատճառով հանել երթուղու սպասարկումից, որի փոխարեն երթուղու սպասարկման գործում ներգրավել ՊԱԶ-3205 մակնիշի 349ՍՏ16 պետհամարանիշի 1991 թվականի արտադրության ավտոբուսը: Սահմանված կարգի համաձայն կատարվել է ներկայացված տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի գնահատում: Ավտոբուսը ստանալով 60 միավորից բարձր գնահատական ապահովել է նաև երթուղու հնարավորի (առանց լրացուցիչ միավորների) 70% միջին գումարային միավոր:

Առաջարկվեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 9-րդ կետի 10-րդ ենթակետի, 69-րդ կետի 2-րդ ենթակետի և 71-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ թույլատրել կատարելու առաջարկված փոփոխությունը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մարտունի(Ա/Կ) – Մադինա – Մարտունի թիվ 27 ներմարզային ավտոբուսային երթուղին սպասարկող ՊԱԶ-672Մ մակնիշի 374US16 պետհամարանիշի /22-26Լ դեղին հիմնագույնի համարանիշ/ 1987 թվականի արտադրության ավտոբուսը տեխնիկապես անսարք լինելու պատճառով հանել երթուղու սպասարկումից, որի փոխարեն երթուղու սպասարկման գործում ներգրավել ՊԱԶ-3205 մակնիշի 349US16 պետհամարանիշի 1991 թվականի արտադրության ավտոբուսը:

Տրանսպորտային միջոցի					
№	***մակնիշը***	***հ/հ***	***դ/հ***	***թ/տ***	***վարորդի անունը, ազգանունը***
1	ՊԱԶ-3205	349US16	-	1991	Սարգսյան Խաչատուր

Հիմք՝ հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի մրցութային թերթիկները 5 թերթից, մրցութային ամփոփիչ թերթիկը 1 թերթից և <<Մարտունու ԲՈՒԱՏ>> ԲԲԸ տնօրենի գրությունը:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Հակոբյան

Քարտուղար՝ Գ. Խաչատրյան

Անդամներ՝ Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան

Լ. Գևորգյան